ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՌՈՄ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հունիսի 15-ից 21-ը, 2025թ.

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Սլավիկ Սարգսյան, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), հունիսի 15-ից 21-ը, *2025թ.*

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

1) Հունիսի 15-ից 18-ը, 2025թ. ԵԽ երևանյան գրասենյակ

2) Հունիսի 19-ից 21-ը, 2025թ. Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիա

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1) Ուսուցողական այց Իտալիայի աշխատանքի պետական տեսչություն,

2) Մասնակցություն Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի հերթական նիստին

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1) Ուսուցողական այցի ընթացքում քննարկվել են՝

- Իտալիայի աշխատանքի տեսչության կառուցվածքի և գործունեության, ինչպես նաև կիրառվող լավագույն փորձը,

- Իտալիայի աշխատանքի տեսչության համագործակցությունը կառավարության, գործատուների և աշխատակիցների, անհատ քաղաքացիների, տեղական առողջապահական մարմինների հետ,
- Աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգ պայմանների ստուգման հիմնական ցուցանիշները,
- Տեսչական գործունեության ազգային համակարգում աշխատանքային իրավունքի և սոցիալական ապահովության հետ կապված հարցերի քննարկում,
- Անօրինական աշխատանքի բացահայտման հետ կապված հիմնական խնդիրները,
- Աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող ստուգման հիմնական ցուցանիշները:

2) Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի հերթական նիստին քննարկվել են՝

- 2025 թվականի հունիսի 10-ից 12-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում անցկացված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 113-րդ համաժողովի արդյունքները,
- «Օսակա 2025» համաշխարհային ցուցահանդեսի շրջանակում իրականացվող նախաձեռնությունները,
- Կանադայում իրականացվող IBOR ծրագիրը, կիրառման արդյունավետությունը,
- Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի ֆինանսական և ընթացիկ կազմակերպչական հարցեր:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1) Ուսուցողական այցի ընթացքում համագործակցության և փորձի փոխանակման շրջանակներում ներկայացվել է Տեսչական մարմինների գործունեության առանձնահատկությունները, իրականացվող վերահսկողության ձևերին և բնույթին, ինչպես նաև ներկայացվել է կիրառվող լավագույն փորձը:

Աշխատանքային քննարկման ընթացքում ներկայացվել է Տեսչական մարմինների վերահսկողական գործառույթների առանձնահատկությունները, հնարավորությունը ձևավորելու աշխատանքային իրավահարաբերություններում առկա լավագույն ավանդույթներն ու առաջնահերթությունները, ինչպես նաև բարելավելու աշխատանքային ոլորտում իրականացվող վերահսկողության գործիքակազմը:

Ուսուցողական այցի շրջանակներում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատակիցները գործնական մասնակցություն են ունեցել Իտալիայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների կողմից իրականացվող ստուգումներին:

2) Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիայի Գործադիր կոմիտեի հերթական նիստին ելույթով հանդես են եկել նախագահ Հո Սիոնգ Հինը (Սինգապուր), գլխավոր քարտուղար Անա Էրկորեկան (Իսպանիա), գանձապետ Քրիստոֆ Իսելլին (Շվեյցարիա):

Գործադիր կոմիտեի յուրաքանչյուր նիստ անդամ պետությունների համար հնարավորություն է ընձեռում աշխատանքային ոլորտում սահմանելու փոխգործակցային ներուժի լիարժեք իրականացումը և նախանշելու զարգացման հնարավորություններն ու հեռանկարները:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1) Իտալիայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն կատարված ուսուցողական այցը հանդիսանում է արդյունավետ հարթակ՝ տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացի բարելավման համար:

2) Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիան միտված է աշխարհի տարբեր երկրների միջև փորձի փոխանակմանը, աշխատողների իրավունքների պաշտպանությանը, փոխգործակցության խորացմանը և ինքնին հանդիսանում է աշխատանքի ոլորտում գործող տեսչական մարմինների միավորման առանցքային հարթակ՝ վերահսկողության ընթացքում առաջացած խնդիրների քննարկման և անհրաժեշտ հանգուցալուծման, ինչպես նաև մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

1) Երկու երկրների միջև փոխայցելություններն ու ակտիվ փոխգործակցությունն արտացոլում են երկկողմ հարաբերությունների հետագա ընդլայնումը, Տեսչական մարմինների միջև լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև երկկողմ գործընկերության խորացումն ու ընդլայնումը:

2) Աշխատանքի տեսչական մարմինների միջազգային ասոցիացիան արդյունավետ համագործակցության առանցքային հարթակ է, որում աշխտանքային իրավունքների պահպանումը հանդիսանում է գերակա խնդիր և յուրաքանչյուր հերթական նիստին ներկայացվում է ոլորտում առկա խնդիրների վերհանում, ինչպես նաև ներկայացվում է դրանց լուծման առավել գործուն տարբերակներ:

Այս հանդիպումներն ակնհայտորեն նպաստելու է ինչպես ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

23 հունիսի, 2025 թվական

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN SLAVIK 3807890467

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ